ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

RA MINISTRY OF REGIONAL ADMINISTRATION STATE WATER COMMITTEE "SHIRAK WATER SUPPLY" CJSC

« 15 » « 07» 2014թ.

ք. Գյումրի Դուդկոյի փող. 1
г. Гюмри, ул. Дудко 1

3-23-61

# ՀՐԱՎԵՐ

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության
կարիքների համար՝
շինանյութերի ձեռքբերման

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված շինանյութ: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-3» :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Դուդկո 1 հասցեով, մինչև 2014թ. հուլիսի 25-ը, ժամը՝ 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Հ.Մելքոնյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ ք. Գյումրի, Դուդկո 1, հասցեում, մինչև 2014թ. հուլիսի 25-ը, ժամը՝ 12:00-ը: Գնման առարկա է հանդիսանում «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերումը:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինանյութերի (որոնք կազմված են՝69 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերին կից ներկայացված կնքվելիք պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ապրանքի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ melkonyan-hripsime@mail.ru:

Հեռախոս՝ (0312) 3-23-61:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝ Վ.Մարտիրոսյան

*Հավելված 1*
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7»ծածկագրով*
*Ընթացակարգի հրավերի*

*N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-3»ծածկագրով*
*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

______________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգիմասնակցիանվանումը (անունը)

<<*Շիրակ-ջրմուղկոյուղի*>> ՓԲԸ-ի կողմից N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-3» ծածկագրով հայտարարված ընթացակարգի ______________________չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

________________________________:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

________________________________________ ______________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» __________ 20..թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված2*
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով*
*Ընթացակարգի հրավերի*

*N «ՀՀՏԿՆՁՏԳԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-3» ծածկագրով*
*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀՏԿՆՁՏԳԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-3» ծածկագրով պարբերական մրցույթի հրավերը______________________________________-ն
մրցույթի մասնակցի անվանումը(անունը)
առաջարկում է_____________________________չափաբաժին(ներ) կատարել հետևյալ գներով.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով | Առաջարկված միավորի գին ԱԱՀ-ով |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* | *6* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | | |
| ... | ... | | | | |
| ... | ... | | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

------------------------------------------------------------------ ________________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«______»______________2014թ
(ամսաթիվը, ամիսը)